

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2019-2020 ուստարի)  
11-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)**

**ա) Հայոց պատմություն (20 միավոր)**

1. Ե՞րբ է տեղի ունեցել Մազնեսիայի ճակատամարտը. 0,5 մ.  
 ա/ Բ.ա. 188 թ. բ/ Բ.ա. 190 թ.  
 գ/ Բ.ա. 331 թ. դ/ Բ.ա. 201 թ.
2. Հայոց ո՞ր գորավարն է Վաղարշապատից դուրս վտարել մագքութների գորքը. 0,5 մ.  
 ա/ Վաչե Մամիկոնյան բ/ Վասակ Մամիկոնյան  
 գ/ Արտավազդ Մանդակունի դ/ Մանվել Մամիկոնյան
3. Նվիրապետական ո՞ր աթոռին էին ենթակա Փոքր Ասիայի, Տրապիզոնի և Դրիմի թեմերը. 0,5 մ.  
 ա/ Կիլիկիայի բ/ Աղթամարի  
 գ/ Կոստանդնուպոլսի դ/ Աղվանից
4. Ո՞վ է հեղինակել «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը. 0,5 մ.  
 ա/ Կիրակոս Կանձակեցի բ/ Ստեփանոս Օրբելյան  
 գ/ Գրիգոր Տաթևացի դ/ Վարդան Արևելցի
5. Ե՞րբ է հիմնադրվել «Մշակ» թերթը. 0,5 մ.  
 ա/ 1856 թ. բ/ 1862 թ.  
 գ/ 1872 թ. դ/ 1882 թ.
6. Քանի՞ հոգի են զոհվել թուրքական կողմից Կոտորածի ձորում. 0,5 մ.  
 ա/ 600 բ/ 2000  
 գ/ 1500 դ/ 750
7. Ո՞ր երորդ դարում է Սյունյաց աշխարհում հիմնվել Հարանց անապատի դպրոցը. 0,5 մ.  
 ա/ XVII բ/ XV  
 գ/ XIII դ/ XIV
8. Ե՞րբ են ստեղծվել Կարինի և Տրապիզոնի հնչակյան մասնաճյուղերը. 0,5 մ.  
 ա/ 1887 թ. բ/ 1889 թ.  
 գ/ 1894 թ. դ/ 1896 թ.
9. Արևելյան Հայաստանում ե՞րբ է ստեղծվել սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակը: 0,5 մ.
10. Ինչպե՞ս էր կոչվում քաղաքապետը Բագրատունյաց Հայաստանում: 0,5 մ.
11. Ո՞վ էր 1890-ական թթ. ընդհանուր ապստամբության կազմակերպման կողմնակիցը Սասուն-Տարոնում: 0,5 մ.
12. Ո՞ր քաղաքում է հիմնադրվել Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)  
 ա/ Օսմանյան ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը Փարիզում  
 բ/ Քրիստափոր Միքայելյանի նահատակվելը  
 գ/ Ադանայի նահանգում 30 հազար հայերի կոտորածը  
 դ/ Ռուսաստանում Պետական երկրորդ դումայի ցրումը  
 ե/ Մանկտ Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծումը  
 զ/ Գևորգ Չավուշի զոհվելը  
 է/ Պատգամավորական կենտրոնական ժողովի փակումը  
 ը/ Հայ-թաթարական ազգամիջյան կռիվների սկիզբը Բաքվում  
 թ/ Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման օրենքի չեղարկումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան գույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. «Բարենպաստակ ընկերություն»
2. «Միություն ի փրկություն»
3. «Հայասեր-ագգասեր»
4. «Պաշտպան հայրենյաց»
5. «Հայրենասերների միություն»
6. «Հայրենիքի սիրո գրասենյակ»

ա. Վան

բ. Մեծ Դարաքիլիսա

գ. Մոսկվա

դ. Ալեքսանդրապոլ

ե. Երևան

զ. Կարին

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:  
0,5 մ.)

1,5 մ. (3 X

ա/ 637 թ. բյուզանդական գործը խոշոր պարտություն է կրել արաբներից:

բ/ 775 թ. Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արճեշի ճակատամարտի տխուր վախճանի մասին, Մուշեղի գլխավորությամբ գնում են դեպի Բագրևանդ գավառ:

գ/ Բագարատ Բագրատունու (826-851 թթ.) եղբայրը՝ Շիրակի տեր Սմբատ Բագրատունին, դարձել է հայոց սպարապետ:

դ/ Գրիգոր Մամիկոնյանի օրոք Հայաստանի կախումը խալիֆայությունից ձևական բնույթ ուներ, իսկ վճարվող հարկը չնչին էր՝ 500 արծաթե դիրհեմ:

ե/ 852 թ. վասպուրականցիները Աշոտ Արծրունու գլխավորությամբ «Արյան լճի» ճակատամարտում պարտության են մատնում արաբներին:

զ/ 564 թ. Հայաստանում պարսիկ մարզպան նշանակված Սուրենը սպանել է Մամիկոնյանց տեր Վասակի որդուն՝ Մուշեղին:

է/ 640 թ. արաբները գրավել են Դվինը, գերեվարել 35 000 մարդ և տարել խալիֆայություն:

ը/ 748 թ. հայերը ապստամբել են՝ Գրիգոր և Մուշեղ Մամիկոնյան եղբայրների գլխավորությամբ:

թ/ Ներսես Կամսարականի օրոք կառուցվել է Թալինի նշանավոր եկեղեցին:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Ք.ա. 1-ին դարի սկզբին Հռոմն իր պետական կառուցվածքով կայսրություն էր:

բ/ Մոնղոլական բանակի գորաջոկատի հրամանատարը կոչվում էր մամլուք:

գ/ Վրացական արքունիքում թագաժառանգի խնամակալին կոչում էին ամիրսպասալար:

դ/ Կիլիկյան Հայաստանում թագադիրը թագավորի առաջին խորհրդականն էր և արքունի պալատի կառավարիչը:

ե/ Ք.ա. 7-րդ դարում Վանի թագավորությունը կենտրոնացված պետություն էր:

զ/ Բագրատունյաց Հայաստանում արքունի կալվածքների և գանձարանի հսկողությունն իրականացնող գորամիավորը կոչվում էր արքունի գունդ:

է/ Հոգևոր աստիճան ընդունած աշխարհիկ իշխաններին կոչում էին պարոնտեր:

ը/ Կիլիկյան Հայաստանում արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան կոչվում էր մարաջախտ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները:  
0,5 մ.)

1,5 մ. (3 X

ա/ Հյուսիսային ծրագրի համաձայն՝ հայոց թագավոր ընտրվելու էր Արցախի մելիքներից մեկը ռուսական կայսեր կողմից:

բ/ Հարավային ծրագրի համաձայն՝ Հայաստանը հռչակվելու էր հանրապետություն՝ նախագահական կառուցվածքով:

գ/ Մովսես Մարաֆյանը առաջարկում էր Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից կազմել կամավորական գորաջոկատներ ու ռուսական զորքերի հետ ուղարկել Հայաստան:

դ/ 1826-1828 թթ. պատերազմի օրերին հայ մտավորականների կազմած ծրագրի համաձայն ռուսական արքունիքը ապահովելու էր հայկական թագավորության վերականգնումը Ռուսաստանի հովանու ներքո:

ե/ Ըստ Շահամիր Շահամիրյանի՝ Հայաստանի ազատագրությունը պետք է գլխավորեին Արցախի մելիքներն ու Էջմիածնի հոգևորականները, իսկ հայ ժողովուրդը կարող էր օժանդակություն ստանալ Վրաստանից և Ռուսաստանից:

զ/ Շահամիր Շահամիրյանի ծրագրի համաձայն՝ Հայաստանի և Ռուսաստանի միջև առաջարկվում էր սահմանել ազատ երթևեկություն:


է/ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը հայ իրականության մեջ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունն էր:

ը/ «Որոգայթ փառացր» սահմանադրական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր:


թ/ Վրաց Հերակլ 2-րդ թագավորը Լոռու գավառը նվիրաբերել է Շահամիր Շահամիրյանին և նրան շնորհել իշխանի տիտղոս:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)  
 1894 թ. Սասունի արյունալի մարտերից հետո պաշտպանները ստիպված թողել են Տավրոքիկը և քաշվել Անդոկ լեռան լանջերը, իսկ մարտերից մեկում քաջաբար զոհվել է Գրգոն:
19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)  
 Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և ...-ի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին:  
 ա. Ո՞ր տարածքն է բաց թողնված մեջբերված հատվածում:  
 բ. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:  
 գ. Ո՞վ է մեջբերված հատվածում նվաճումներ կատարած արքայի եղբայրը:
20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)  
 Արատտայի արքան միաժամանակ երկրի գերագույն ... -ն (1) էր: Երկրի կարևորագույն հարցերի լուծման համար նա գումարում էր ... (2): Հիշատակվում է երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան, որը կոչվում էր «...» (3):
21. Տրամաբանական խնդիր. 1 մ.  
 Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 11000 տարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:
22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)  
 ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:  
 բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում հյուսիսային ամբողջ երկայնքով:



23. Միջնադարյան հայ ո՞ր գիտնական-փիլիսոփան է իր աշակերտների հետ պատկերված. 0,5 մ.



24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (կարդացե՛ք հակիրճ մեկնաբանությունը և պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

19-20-րդ դդ. սահմանագլխի այս ծաղրանկարում հեղինակը փորձել է ակնարկել, որ, ի թիվս այլ հարցերի, Հայկական հարցի լուծման գործում Օսմանյան կայսրությունը վայելում էր այդ պետության աջակցությունը:

ա. Ո՞վ է պատկերված նկարի ձախ կողմում:

բ. Ո՞ր պետության ղեկավարն է նկարի աջ կողմում պատկերված միապետը:



**բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)**

1. Ե՞րբ է տեղի ունեցել Բենեվենտումի ճակատամարտը. 0,5 մ.  
 ա/ Բ.ա. 390 թ. բ/ Բ.ա. 265 թ.  
 գ/ Բ.ա. 197 թ. դ/ Բ.ա. 275 թ.
2. Ո՞վ է Աքեմենյան տերության տիրակալ Կամբիզի դեմ ապստամբած նրա կրտսեր եղբայրը. 0,5 մ.  
 ա/ Բարդիա բ/ Քսերքսես  
 գ/ Դարեհ 1-ին դ/ Կյուրոս Կրտսեր
3. Ե՞րբ է Ֆրանսիայում հռչակվել երրորդ հանրապետությունը. 0,5 մ.  
 ա/ 1848 բ/ 1871 թ.  
 գ/ 1789 թ. դ/ 1870 թ.
4. ԱՄՆ ո՞ր նախագահն է մեծ դեր խաղացել ստրկության վերացման գործում. 0,5 մ.  
 ա/ Թոմաս Չեֆերսոն բ/ Աբրահամ Լինքոլն  
 գ/ Վուդրո Վիլսոն դ/ Թեոդոր Ռուզվելտ
5. Շվեյցարական ո՞ր քաղաքում է հիմնվել Խաղաղության միջազգային բյուրոն: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)  
 1. արաբական խալիֆայությունում առկա հարկատեսակ  
 2. մոնղոլական փոխարքայություն  
 3. Ժողովրդական ժողովը Ռուսիայում  
 4. գինվորական առաջնորդ Ճապոնիայում  
 ա. ուլուս բ. վեչե գ. սյոգուն դ. ջիզիե  

1	2	3	4
7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)  
 ա/ Խաղաղության կողմնակիցների միջազգային շարժման մասնակիցներին կոչում էին պացիֆիստ:  
 բ/ Սրբազան դաշինքը օժանդակել է հույներին Օսմանյան կայսրության դեմ ապստամբության ընթացքում:  
 գ/ 1889 թ. ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Հաագայում հրավիրվել է 26 պետությունների միջազգային համաժողով:  
 դ/ 1814-1815 թթ. Վիեննայի վեհաժողովում Ֆրանսիայի ներկայացուցիչը Նապոլեոն Բոնապարտն էր:  
 ե/ 1807 թ. կնքվել է Տիլզիտի պայմանագիրը, որով Ալեքսանդր 1-ինը ճանաչել է Ֆրանսիայի բոլոր տարածքային ձեռքբերումները Եվրոպայում:  
 զ/ 1648 թ. կնքված Վիեննայի պայմանագիրը հանրագումարի է բերել համաեվրոպական Երեսնամյա պատերազմը:  
 է/ 18-րդ դարի երկրորդ կեսին Անգլիան Ֆրանսիայից զավթել է վերջինիս ամենախոշոր գաղութ Կանադան, ինչպես նաև Լուիզիանան՝ Միսիսիպի գետից արևելք:  
 ը/ Անգլիական բուրժուական հեղափոխությունը առաջ էր քաշել «Խրճիթներին՝ խաղաղություն, պալատներին՝ պատերազմ» կարգախոսը:  

1	2	3
8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)  
 ա. Երուսաղեմի թագավորությանը ենթակա խաչակրաց պետություններից 2-ը,  
 բ. Նրանց պաշտպանության համար ստեղծված հոգևոր-ասպետական միաբանություններից 2-ը:

9. Աշխատանք **Նապոլեոնյան շրջանում** Եվրոպայի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



1. Գերմանական ո՞ր պետությունն է պատկերված:
2. Նապոլեոնի հետ հակամարտության մեջ գտնվող ո՞ր կայսրությունն է պատկերված:
10. Միջնադարյան Եվրոպայի ո՞ր նշանավոր գործչի նկարն է պատկերված ստորև. 0,5 մ.



11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ.

1,5 մ. (3 X 0,5 մ.)



ա. Ո՞ր պետության դեմ տարած հաղթանակի արդյունքում Եվրոպայի վերաբաժանումն են քննարկում պատկերված անձինք:

բ. Նշե՛ք պատկերված պետական գործիչներից 2-ի անունը և ազգանունը:

Հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2020 թ.